

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2009 թվականի մայիսի 19-ին ժամը 15:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝

Լիլիթ Ասատրյան	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
Սողոմոնյան Սյուզաննա, Կարեն Զառոյանի լիազոր ներկայացուցիչ	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
Հովհաննիսյան Միհրան	«Եղվարդ» ՋՕԸ
Նազարյան Հազարասյետ	«Եղեգնաձոր» ՋՕԸ
Խաչատրյան Լիա	«Զարգացում և ինտեգրացիա» ՀԿ
Մախյան Նարինե	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
Համբարձումյան Մասուն	«Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ
Մովսիսյան Կարինե	«Գործիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
Շահինյան Պողոս	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
Ոսկանյան Արման	«Տավուշի զարգացման» ՀԿ
Վերանյան Անդրանիկ	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
Տեր-Հովակիմյան Ալեքսանդր	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
Ղազարյան Տոնական	«Շենիկ» ՋՕԸ

Նիստից բացակայում էին՝

Ենգիբարդյան Վիկտոր	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
Միքայելյան Շիրակ	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ

Նիստին մասնակցում էին նաև՝

Արա Հովսեփյան	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Վիկտորյա Գրիգորյան	ՇԽ օգնական

Նիստին մասնակցում էին նաև ՋԼՄ ներկայացուցիչներ:

Համաձայն ՇԽ Կանոնակարգի 3.12 կետի (ՇԽ նիստերը նախագահում են ՇԽ անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ ՇԽ անդամների անունների այբբենական կարգի)՝ նիստը նախագահում էր Տոնական Ղազարյանը:

Նախագահողն առաջարկեց հաստատել նախօրոք ներկայացված օրակարգը: Օրակարգի վերաբերյալ եղան հետևյալ առաջարկությունները.

ՇԽ անդամ Ա. Վերանյանն առաջարկեց այլ հարցերում ընդգրկել և քննարկել վերջերս ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Էլիսթոնի՝ ՀՀ նախագահ Ս. Սարգսյանին ուղղված նամակում ՀՄՀ-Հայաստան ծրագրի շարունակության և առաջիկայում կայանալիք Երեվանի ավազանու ընտրությունների կապվածության հարցը, մանավանդ, որ հունիսի 10-ին նախատեսվող ՀՄԿ խորհրդի նիստում ակնկալվում է որոշում՝ կապված ՀՄՀ-Հայաստան ծրագրի շարունակության հետ: ՇԽ անդամ Հ. Նազարյանը իր խորին մտահոգությունը հայտնեց Վայոց Ձորի երրորդային կարգի ջրանցքների վերականգնման աշխատանքների վերաբերյալ: Նշեց, որ 19 համայնքներ, որոնք ունեն

ռոռզման ջրի մեծ խնդիրներ, հայտեր են ներկայացրել, ապահովել են համաֆինանսավորումը, սակայն կարող են դուրս մնալ ծրագրից՝ տնտեսական արդյունավետության ցուցանիշները ձախողելու պատճառով՝ համաձայն ամերիկյան գործընկերների պնդումների:

Հաշվի առնելով վերոնշյալ առաջարկությունները՝ օրակարգը հաստատվեց միաձայն հետևյալ ձևակերպմամբ.

1. 15:00 - Տեղեկատվության ներկայացում ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաջընթացի արդյունքների վերաբերյալ

Ձեկուցող՝ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Ա. Հովսեփյան

2. 15:30 - Տեղեկատվության ներկայացում՝ ապրիլի 17-ին և մայիսի 8-ին կայացած ԿԽ նիստերի վերաբերյալ

Ձեկուցող՝ ԿԽ անդամ Ա. Ոսկանյան

3. 16:00 - Քննարկում ՇԽ ընթացիկ աշխատանքների վերաբերյալ

4. 16:30 Այլ հարցեր

ա) Պոպմակայանների վերականգնման համար ներկայացված առաջարկների գնահատման մրցութային հանձնաժողովի անդամի ընտրություն

բ) Երեվանի ավագանու ընտրությունները և դրա հետ կապված ՀՄՀ-Հայաստանի վարկանիշը

գ) ՀՄՀ-Հայաստանի երրորդային կարգի ջրանցքների վերականգնման ենթածրագրի ներկա կարգավիճակը

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Արա Հովսեփյանը ներկայացրեց ծրագրի իրականացման ներկա ընթացքը, առաջընթացի արդյունքները: Նա մասնավորապես նշեց, որ վերջերս կնքվել են պայմանագրեր վարկային ծրագրի երկրորդ փուլն իրականացնող բանկերի և վարկային կազմակերպությունների հետ: Տրամադրվող վարկային միջոցների ընդհանուր գումարը 8.5 մլն դոլար է, ժամկետայնությունը՝ մինչև 7 տարի, մինչև 12 տոկոս տարեկան տոկոսադրույքով: Նախատեսվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերը հատկացնել ևս 5.5 մլն դոլարի վարկ և ևս 1.5 մլն՝ 2010 թվականին:

Ա. Հովսեփյանն անդրադարձավ մաս ռոռզման ենթաբաղադրիչի խնդիրներին, մասնավորապես, երրորդային կարգի ջրանցքների հարցին (ներտնտեսային ցանց): Նշեց, որ առաջացել է ժամանակի սղություն, նախատեսված աշխատանքների շինարարական ժամանակահատվածում հասցնելու խնդիր, որը հիմնականում պայմանավորված է Հայաստանում համապատասխան նեղ մասնագիտական գիտելիքների և միջազգային չափանիշներին համապատասխան փորձառության պակասի հետ: Սակայն, ի դեմս ՀՀ վարչապետ, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տ. Սարգսյանի, ՀՄՀ-Հայաստանը ներդնելու է իր ամբողջ կարողությունները նախատեսված բոլոր ծրագրերը ավարտին հասցնելու նպատակով: Ինչ վերաբերում է երրորդային կարգի ջրանցքներին, ապա դրանք, ինչպես և ծրագրային ցանկացած բաղադրիչ, պետք է բավարարեն տնտեսական վերադարձելիության ցուցանիշը: Վայոց Ձորի որոշ համայնքների ներտնտեսային ցանցերի շինարարությունը գնահատվել է որպես տնտեսապես ոչ արդյունավետ և այդ պատճառով դուրս կմնան ծրագրից:

Վերոնշյալի վերաբերյալ հանդես եկավ նախագահող Տ. Ղազարյանը. նշեց, որ այսօր Հայաստանում ռոռզման խնդիրները շատ լուրջ են և կա ներդրումների հրատապ կարիք: Ավելի, քան երկու տարի ջրօգտագործողներին ներկայացվել է ծրագրով նախատեսված գործողությունները, սակայն այսօր դրանցից շատերի իրականումը դրվել է կասկածի տակ: Տ. Ղազարյանը հարց բարձրացրեց ինքնահոս համակարգերի վերաբերյալ:

Ա. Հովսեփյանը նշեց, որ ինքնահոսների վերջնական նախագծերը կան, և մինչև մայիս ամսվա վերջ կհայտարարվեն շինարարական աշխատանքների մրցույթները:

ՇԽ անդամ Մ. Հովհաննիսյանը հարց բարձրացրեց Արգնի-Շամիրամ մայր ջրանցքի մասնակի

շինարարության արդյունքում բնակիչների ոռոգման անհատական խողովակները փակելու և ոռոգման սեզոնի բացման ժամանակ դրանք հետ չբացելու վերաբերյալ: Ա. Հովսեփյանը առաջարկեց առաջիկայում քննարկել այդ հարցը իրականացնող կազմակերպության հետ համատեղ և գտնել հնարավոր լուծումներ:

Իր մտահոգությունները ևս մեկ անգամ կիսեց Հ. Նազարյանը Վայոց Ձորի մարզի երրորդային կարգի ջրանցների վերականգնման վերաբերյալ: Նշեց, որ հայտատու համայնքներն իրենց բյուջետները նախատեսել են համապատասխանաբար: Մեծ քանակությամբ ոռոգման ջուր է բերվում համայնքներ, սակայն չի հասնում ջրօգտագործողին քանդված ներտնտեսային ցանցերի պատճառով, և այս դեպքում ասել, որ դրանց վերականգնումը տնտեսապես անարդյունավետ է՝ արդարացված չէ: Ա. Հովսեփյանը հայտնեց իր պատրաստակամությունը ևս մեկ անգամ անդրադառնալ այդ հարցին:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ

ԿԽ պատվիրակ Արման Ոսկանյանը ներկայացրեց ապրիլի 17-ին և մայիսի 8-ին կայացած ԿԽ նիստերին քննարկված հարցերը և, հատկապես, կանգ առավ ոռոգման ենթակառուցվածքներ ծրագրի խնդրահարույց հարցերին:

Վերջինիս վերաբերյալ հանդես եկավ ՇԽ անդամ Մ. Հովհաննիսյանը և հորդորեց ԿԽ անդամներին մինչ ԿԽ նիստերը անցկացնել համատեղ քննարկում՝ լսելու բնագավառի խնդիրներին ավելի քաջատեղյակ գործընկերներին, ինչը հնարավորություն կտա հանդես գալ ավելի ուժեղ դիրքերից:

Այս կարծիքին միացան նաև մյուս ՇԽ անդամները. Ա. Տեր-Հովակիմյանը նշեց, որ այդ մտտեցումը բազմիցս քննարկվել է: Կա նույնիսկ ՇԽ որոշում այն մասին, որ ԿԽ անդամները հիմնական հարցերի շուրջ պետք է ներկայացնեն ՇԽ միասնական մտտեցումը, ինչը շատ լավ դրսևորվեց վարկային ծրագիրը շարունակելու հարցի պարագայում:

Լ. Ասատրյանը և Ա. Վերանյանը նույնպես կարծում էին, որ ՇԽ անդամների հետ նախապես խորհրդակցելը կուժեղացնի ՇԽ դերը որոշումների կայացման գործում:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ

Առաջարկություն եղավ օրակարգի երրորդ հարցը՝ քննարկում ՇԽ ընթացիկ աշխատանքների վերաբերյալ, տեղափոխել հաջորդ նիստ: Առարկություններ չեղան:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ

Այլ հարցեր

ա) Քննարկման արդյունքում որոշվեց Պոպմակայանների վերականգնման համար ներկայացված առաջարկների գնահատման մրցութային հանձնաժողովի անդամ նշանակել/ընտրել Լիլիթ Ասատրյանին, իսկ Նարինե Մայիլյանին՝ որպես փոխարինող: Այն պարագայում, եթե Լ. Ասատրյանը չկարողանա մասնակցել աշխատանքներին, ապա անդամի պաշտոնում հանդես կգա Ն. Մայիլյանը:

բ) ՇԽ անդամ Ա. Վերանյանը իր ելույթում նշեց, որ ՇԽ-ը որպես քաղաքացիական հասարակությունը ներկայացնող կառույց չպետք է անմասն մնա ՀՄՀ-Հայաստանի ծրագրի վրա ազդող գործընթացներից, քանի որ հնարավոր բացասական զարգացումների դեպքում մեծապես կտուժեն ծրագրի շահառուները: Այս պարագայում, հաշվի առնելով Երևանի ավագանու առաջիկա ընտրությունը և դրա հետ կապված վերջերս ԱՄՆ պետքարտուղարի նամակը ՀՀ նախագահին, հանդես գալ համատեղ ուղերձով՝ հորդորելու ընտրություններին մասնակից և կազմակերպող կողմ հանդիսացող բոլոր մարմիններին ցուցաբերել հանդուրժողականություն և հավատարիմ մնալ արդար և թափանցիկ ընտրությունների կազմակերպման սկզբունքներին:

Առաջարկությանը առարկություններ չեղան: Որոշվեց, որ ՇԽ անդամներ Ա. Վերանյանը և Ս. Համբարձումյանը կաշխատեն ուղերձի վրա՝ ելնելով հետևյալ սկզբունքներից. այն պետք է լինի համառոտ և բխի ՀՄՀ-Հայաստան ծրագրից: Նախագիծը կուղարկվի ՇԽ անդամներին

հավանության համար:

գ) Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՄՀ-Հայաստանի երրորդային կարգի ջրանցքների վերականգնման ենթաձրագրի ներկա կարգավիճակի հարցը քննարկվել էր օրակարգի առաջին հարցում՝ այն համարվեց սպառված:

Նիստն ավարտվեց ժամը 17:00-ին:

Նախագահող՝ Տ. Ղազարյան

Քարտուղար՝ Վ. Գրիգորյան

19-ը մայիսի, 2009թ.